ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» հոկտեմբերի 2011թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Բաբաջանյան փողոցի հ.26/6 շենքի 6-րդ հարկի հ.28՝ մեկ սենյականոց բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 29.09.2009թ. հ.2675975 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ռոմիկ Գրիգորյանին և Հռիփսիմե Հովնանյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն որոշման նախագծով բնակարան է հատկացվում Սովետական միության բասկետբոլի գծով սպորտի վարպետ Ռոմիկ Գրիգորյանին /Սովետական միության սպորտային ընկերության և կազմակերպության խորհրդի կողմից անդամ /վկայական հ.59289 տրված 18.10.1967թ./, որը Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության կազմում մասնակցել է Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների միության ժողովուրդների 1967 թվականի սպարտակիադային։

Ռոմիկ Գրիգորյանն աջակցել է Հայաստանի Հանրապետությունում բասկետբոլ մարզաձևի զարգացմանը։

Ռոմիկ Գրիգորյանի երկու անձից բաղկացած ընտանիքը՝ ինքը, կինը՝ Հռիփսիմե Հովնանյանը փաստացի բնակվում են Արզումանյան փողոցի հ.16/2 շենքի հ.27 բնակարանում, որի սեփականատերերը Արմինե և Անահիտ Գրիգորյաններն են (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 14.06.2005թ.հ.1140393 վկայական)։

Ռոմիկ Գրիգորյանի ընտանիքը բնակարանի կարիքավոր է։

Ելնելով վերոգրյալից «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ